ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/225

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Մասնակից՝ «Ջինջ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Ջինջ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Մեսրոպյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/7ՏՀ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14224-2020 գրությամբ «Ջինջ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 16.09.2020թ. թիվ ՀԲ//26520-2020 գրության հիման վրա, 22.09.2020թ.-ին «Ջինջ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 22.09.2020թ.-ին:

22.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/225 համարի ծածկագիրը:

01.10.2020թ.-ին և 22.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 01.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.10.2020թ.-ին:

2. <u>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 16.09.2020թ. թիվ ՀԲ//26520-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար Արարատի մարզի Գեղանիստ Արբաթ միջհամայնքային ճանապարհի 1.127 մ հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/7ՏՀ ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին «Ջինջ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել էր անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ:

08.09.2020թ.-ին գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է, «Ջինջ» ՍՊԸ-ին ծանուցվել է անհամապատասխանության շտկման մասին: Սահմանված ժամկետում

կազմակերպության կողմից ստացվել է անհամապատասխանության շտկում, սակայն փաստացի չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով ընթացք տալ՝ մասնակցին ընդգրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) ենթակետը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/7ՏՀ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ջինջ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ջինջ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 22.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ջինջ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14224-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին հայտնել է, որ Ընկերությունը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի պատվերով՝ ընդհանուր պայմանագրով, Երևան քաղաքում և ՀՀ բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման և վերակառուցման շինարարական աշխատանքների շրջանակներում իրականացրել է ճանապարհների և փողոցների ասֆալտաբետոնե ծածկույթների վերականգնման շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն, սակայն գնահատող հանձնաժողովը չի ընդունել ներկայացված փաստաթղթերը, քանի որ ներկայացված ակտերում ներառված է եղել ինչպես ասֆալտաբետոնե ծածկույթների վերականգնման շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների վերաաբերյալ տեղեկատվություն, այնպես էլ այլ կատարված աշխատանքների մասով: Մասնակիցը նաև ներկայացրել է տեղեկանք, որում ըստ տարեթվերի առանձնացվել են մատուցված ծառայությունների դիմաց վճարված գումարները:

4. <u>ՍՑ-LO-2020/225 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 20.08.2020թ.-ին հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/7ՏՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ջինջ» ՍՊԸ-ն:

iii. «Ջինջ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/7ՏՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Մասնակիցը թիվ 3 հավելվածով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.09.2020թ.-ի ժամը 15:00-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության

- 4.1-րդ կետի համաձայն՝ «Ջինջ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես, ներկայացված որակավորման չափանիշներին համապատասխանող փաստաթղթերը չեն հանդիսանում հրավերով պահանջվող՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նոխորդող երեք տարվա ընթացքում «շինարարության որակի տեխնիկական հսկողության ըստ քաղաքաշինական տրանսպորտային ոլորտի» լիցենզիայի ներքո պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պայմանագիր:

- 7.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ որոշել է կասեցնել գնման գործընթացը և ծանուցել Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն «Ջինջ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չի շտկվել:

- 8.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է Մասնակցի հայտը մերժել:

vi. Ընթացակարգի համակարգող՝ Ա. Կարապետյանը 08.09.2020թ.-ին գրությամբ դիմել է Մասնակցին և հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/7ՏՀ ծածկագրով ընթացակարգին Ձեր կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

Ձեր կողմից ներկայցված որակավորման չափանիշներին համապատասխանող փաստաթղթերը չեն հանդիսանում Հրավերով պահանջվող հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում «Շինարարության որակի տեխնիկական հսկողություն ըստ քաղաքաշինական Տրանսպորտային ոլորտի» լիցենզիայի ներքո պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պայմանագիր:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ առաջարկում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել շտկումները:»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14224-2020 գրությամբ «Ջինջ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ

իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական

ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ժ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով

ներկայացնում է խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում՝ հայտերի գնահատման համար հրավերով պահանջված փաստաթղթերը:

Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտրված խորհրդատուն որոշվում է ներկայացված հայտերից՝ հրավերով նախատեսված ոչ գնային նվազագույն պայմաններին համապատասխանող գնահատված և ամենացածր գին առաջարկած մասնակցի ընտրության մեթոդով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը,

իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 2.2 կետի համաձայն՝ Մասնակիցը գրավոր հայտարարությունից բացի պետք է ներկայացնի՝

1. Տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ «Շինարարության որակի տեխնիկական հսկողություն ըստ քաղաքաշինական հետևյալ ոլորտի՝ Տրանսպորտային» լիցենզիա, որը չպետք է կասեցված լինի, ինչպես նաև դրա գործողության ժամկետը չի կարող պակաս լինել աշխատանքների կատարման համար սահմանված վերջնաժամկետից:

2. Հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում «Շինարարության որակի տեխնիկական հսկողություն ըստ քաղաքաշինական Տրանսպորտային ոլորտի» լիցենզիայի ներքո պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում գնման առարկայի նախահաշվային արժեքից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում գնման առարկայի նախահաշվային արժեքի հիսուն տոկոսից:

Սույն ենթակետի առաջին պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի, պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթուղթ՝ ակտ, արձանագրություն, հաշիվ ապրանքագիր) պատճենները:

Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից, 2-րդ կետով սահմանված նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի, պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթուղթ՝ ակտ, արձանագրություն, հաշիվ ապրանքագիր) պատճեններից և լիցենզիայից (նշված ներդիրներով) մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից, այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

Նշված պահանջին չբավարարող հայտերը ենթակա են մերժման:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 20.08.2020թ.-ին հայտարարված «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/7ՏՀ» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ջինջ» ՍՊԸ-ն թիվ 3 հավելվածով՝ Հանձնաժողովին է ներկայացրել հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը 09.09.2020թ.-ի ժամը 15:00-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ «Ջինջ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված որակավորման չափանիշներին համապատասխանող փաստաթղթերը չեն հանդիսանում հրավերով պահանջվող՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նոխորդող երեք տարվա ընթացքում «շինարարության որակի տեխնիկական հսկողության ըստ քաղաքաշինական տրանսպորտային ոլորտի» լիցենզիայի ներքո պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պայմանագիր, ինչից ելնելով որոշում է կայացվել կասեցնել գնման գործընթացը և ծանուցել Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն «Ջինջ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չի շտկվել, ինչով պայմանավորված Մասնակցի հայտը մերժվել է:

Ընթացակարգի համակարգող՝ Ա. Կարապետյանը 08.09.2020թ.-ին գրությամբ դիմել է Մասնակցին՝ առաջարկելով Կարգի 41-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել շտկումները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև

արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատաս-խանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատաս-խանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Վերոգրյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգով սահմանված և Մասնակցին ընձեռնված շտկման հնարավորության ժամանակահատվածը, քանի որ Հանձնաժողովի քարտուղարը Մասնակցին ծանուցել է 08.09.2020թ.-ին, իսկ հայտը մերժել է 09.09.2020թ.-ին ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի ժամանակ: Նման պայմաններում «Ջինջ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջներից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14224-2020 գրությամբ «Ջինջ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/225 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**